ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀՐԱՎԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՏԴ 342
DOI: 10.56246/18294480-2023.14-34

ԱՄԻՐՅԱՆ ԱՆԻ
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ a.amiryan@gsu.am

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի սահմանադրահրավական լիազորություններին՝ կապված դատական իշխանության անկախության ապահովման հետ:

Հայաստանի Հանրապետության առջև ծառացած կարևորագույն մարտահրավերներից է դատական իշխանության անկախության ապահովումը: Դատական իշխանության անկախության հարցը մշտապես եղել է արդիական՝ ներառելով տարբեր բաղադրատարրեր, մասնավորապես այդ համակարգի ներսում ինքնակառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը, դատավորների նշանակման և վերջիններիս նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմնահարցերը:

Ժամանակակից պետությունների սահմանադրական համակարգերում դատական իշխանության անկախության սկզբունքը հենվում է իշխանությունների բաժանման հայեցակարգի հիման վրա: Այս սկզբունքի համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կազմում են կառավարման համակարգի երեք առանձին ճյուղերը, որոնց միջև գործում են փոխադարձ զսպումների և հակակշիռների կառուցակարգեր: Վերջինս հնարավոր է դառնում, երբ երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը, և առկա են իրավական ժողովրդավարություն, ինչպես նաև սահմանադրական, քաղաքական ու պառլամենտական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ:

Նշված ենթատեքստում հոդվածում ուսումնասիրվում է անկախ սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի դերը դատական իշխանության անկախության ապահովման ոլորտում՝ հիմք ընդունելով ՀՀ

օրենսդրության, Վենետիկի հանձնաժողովի, Բորդոյի հռչակագրի իրավակարգավորումները:

ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Իսկ դատարանի անկախությունն առաջին հերթին պայմանավորված է դատավորի անկախությամբ:

Հոդվածում ներկայացվում են ոլորտում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, առաջարկներ են արվում՝ վերաբերելի իրավական նորմերի կատարելագործման ուղղությամբ:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, Բարձրագույն դատական խորհուրդ, դատարան, դատավոր, անկախություն, իշխանությունների բաժանում:*

Դատական իշխանության անկախության հիմնական երաշխիքը դատավորների բարձր կարգավիճակի որակական ապահովումն է, և որպես այդ նպատակին հասնելու միջոց՝ դատավորների ընտրության և նշանակման, նրանց լիազորությունների դադարեցման, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում տարբեր պետական մարմինների միջև լիազորությունների այնպիսի տարանջատումը, որն առավելագույնս կնպաստի այդ մարմինների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգերի արդյունավետությանը:

Դատավորի ընտրությունը և նշանակումը պետք է իրականացվի օբյեկտիվության և արդարության չափանիշներին համապատասխան՝ հիմնված թեկնածուների մասնագիտական որակների վրա: Իսկ դատավորի առաջխաղացումը պետք է բացառապես հիմնված լինի օբյեկտիվ գնահատման արդյունքում հաստատված դատական պարտականությունների կատարման որակների և արժանիքների վրա:

Դատական իշխանության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման գործում կարևոր նշանակություն ունի Բարձրագույն դատական խորհրդի գործունեության օրենսդրական ամրագրումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածը սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) լիազորությունները.

Խորհրդարանական կառավարման մոդելի անցմամբ պայմանավորված՝ Սահմանադրության 175–րդ հոդվածի 1-ին մասի մի քանի կետերով Բարձրագույն դատական խորհրդին փոխանցվեցին մի շարք լիազորություններ, որոնք կիսանախագահական կառավարման համակարգում վերապահված էին Հանրապետության Նախագահին: Այդ լիազորություններն են՝ դատավորների թեկնածուների՝ ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների հաստատումը, ինչպես նաև դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ որոշում կայացնելու, դատավորի լիազորությունների դադարեցման հարցերի լուծումը: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվեցին դատավորների, դատարանների նախագահների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման (ընտրության) տարբեր ընթացակարգեր:

Կարծում ենք, որ Սահմանադրությունն ապահովեց օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռված մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին:

Մեր կարծիքով՝ պետք է դրական գնահատել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացման գործընթացում առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվեցին դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները: Ընդ որում Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուների համար սահմանվեցին տարբերակված պահանջներ:

Սահմանադրական դատարանի դատավորների և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները նույնական են. այդ դատարանների դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Ներկայացվող պահանջների տարբերությունը միայն այն է, որ Սահմանադրական դատարանի դատավոր ընտրվելու համար պահանջվում է առնվազն տասնհինգ տարվա փորձառություն, իսկ Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է

նշանակվել մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող անձը[1]:

Առաջին ատյանի դատավորների թեկնածուներին և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջներն ամրագրված են Սահմանադրության 165-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ այդ դատարանների դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

Կարծում ենք, որ Սահմանադրությամբ պետք է ամրագրել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուների համար տարիքային ցենզ կամ մասնագիտական աշխատանքի նվազագույն ստաժ:

Սահմանադրությամբ սահմանվել է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին և նախագահներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է ՀՀ նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանվել է Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության մրցութային կարգ: Բարձրագույն դատական խորհուրդը մրցույթի արդյունքներով Ազգային ժողովին է ներկայացնում Վճռաբեկ դատարանի դատավորների երեք թեկնածու՝ յուրաքանչյուր տեղի համար: Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Հանրապետության նախագահը: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Սահմանադրությամբ ամրագրվել է նաև այն, որ Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից՝ վեց տարի ժամկետով[2]:

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., հոդված 165-րդ//www.arlis.am:

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., հոդված 166-րդ//www.arlis.am:

Այսինքն՝ 2015թ.-ի սահմանադրական կարգավորումների համաձայն՝ Ազգային ժողովն է ընտրում թե՛ Վճռաբեկ դատարանի դատավոր առաջարկվող թեկնածուին՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար, Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից, և թե՛ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ դարձյալ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած Վճռաբեկ դատարանի թեկնածուների նշանակման գործընթացում, ըստ էության, Հանրապետության նախագահին որևէ գործառույթ վերապահված չէ, և Հայաստանի Հանրապետության նախագահին վերապահված այս լիազորությունը կարող ենք որակել որպես ձևական ընթացակարգ:

Ազգային ժողովի կողմից դատավորների ընտրության ընթացակարգի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն արտահայտել է հետևյալ տեսակետը. «Թվում է, թե այն առավել ժողովրդավարական մեխանիզմ է, բայց կարող է նաև դատավորներին ներգրավել քաղաքական գործունեության մեջ և հանգեցնել գործընթացի քաղաքականացմանը»[3]:

Խորհրդարանական հանրապետություններում իշխանության համակարգի առանցքում խորհրդարանն է: Միայն խորհրդարանն է ձևավորվում համընդհանուր ընտրությունների միջոցով: Պետական իշխանության բոլոր մյուս ինստիտուտները ձևավորվում են խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ: Սակայն խորհրդարանի վճռորոշ ազդեցությունը պետական իշխանության ողջ համակարգի կազմավորման և գործառնության ընթացակարգերի վրա ամենևին չի նշանակում, որ գործում է զսպումների և հակակշիռների մեխանիզմը:

Խորհրդարանի կողմից դատավորների ընտրությունը հայեցողական ակտ է, հետևաբար եթե անգամ թեկնածություններն առաջարկվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից, չի բացառվում, որ խորհրդարանը կարող է ձեռնպահ մնալ առաջարկն ընդունելուց:

Մեր կարծիքով՝ խորհրդարանն առավել քան ներքաշված է քաղաքական գործընթացների մեջ, և դատավորների ընտրությունը խորհրդարանում կարող է հանգեցնել քաղաքական գործարքների: Պառլամենտի յուրաքանչյուր անդամ կարող է ձգտել ունենալու իր «սեփական» դատավորը:

---

[3] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) կարծիքը, 9-10-րդ պարբերություններ//https://www.venice.coe.int:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է Հանրապետության նախագահին օրենսդրորեն վերապահել Բարձրագույն դատական խորհրդի կողմից յուրաքանչյուր տեղի համար ներկայացված երեք թեկնածուներից մեկին ընտրելու և նշանակելու լիազորություն: Վերջին դեպքում էականորեն կսահմանափակվի քաղաքական մարմնի բազմանձյա ներգործության հնարավորությունը Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման գործընթացի վրա, և որպես հետևանք՝ կնվազի դատավորների քաղաքականացման վտանգը:

Վճռաբեկ դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման ընթացակարգը նույն մեխանիզմով է իրականացվում, այն է՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդով՝ Բարձրագույն դատական խորհրդի եզրակացության հիման վրա:

Գտնում ենք, որ այն պարագայում, երբ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների լիազորությունների դադարեցման հիմքի, ինչպես նաև նշանակման կարգի վերաբերյալ, չպետք է լինի քաղաքական մարմնի որոշում: Քաղաքական մարմինների ներգրավվածությունը դատավորների նշանակման գործընթացում, ինչպես նշվեց, մեկնաբանվում է նրանով, որ անհրաժեշտ է ապահովել որոշակի ժողովրդավարական լեգիտիմություն դատական իշխանության համար:

Պառլամենտական կառավարման համակարգում Հանրապետության նախագահի կարգավիճակը ամրագրվել է Սահմանադրությամբ, որի համաձայն Հանրապետության նախագահը պետության գլուխն է, ինչպես նաև Հանրապետության նախագահն հետևում է Սահմանադրության պահպանմանը:

Սահմանադրության պահպանման երաշխավորի գործառույթով պայմանավորված՝ Սահմանադրությամբ Հանրապետության նախագահին իրավունք է վերապահում միայն Բարձրագույն դատական խորհրդի ստացված առաջարկությունը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել Բարձրագույն դատական խորհուրդ[4]:

Հանրապետության նախագահի առարկությունները Խորհրդի համար պարտադիր չեն, և եթե այն չընդունի այդ առարկությունը, ապա Նախագահին մնում է կա՛մ ստորագրել դատավորի նշանակման ակտը, կա՛մ դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության խախտման հիմքով:

---

[4] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., 139-րդ հոդված, 2-րդ կետ//www.arlis.am:

Հանրապետության նախագահին մասնակցությունը դատական իշխանության ձևավորման համակարգում Ազգային ժողովի հետ իրական հակակշիռ չի ապահովում:

Սահմանադրական փոփոխություններում առկա է նաև մեկ այլ թերություն: Այսպես, Խորհրդի գործունեության ժամկետը սահմանվել է 5 տարի, ինչը համընկնում է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի հետ: Սա ստեղծում է ռիսկ խորհրդի անկախության համար, քանի որ փաստացի ստացվում է, որ իշխանության երեք ճյուղերը գործում են հավասար ժամկետով: Ճիշտ կլիներ Խորհրդի համար վեց տարի սահմանելը, ինչպես այլ մեխանիզմների դեպքում:

Պետք է նաև նշել, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրական դատարանի ձևավորման հարցում դերակատարություն է վերապահվե նաև Դատավորների ընդհանուր ժողովին: Սահմանադրական դատարանի 9 անդամներից 3-ին առաջադրում է Դատավորների ընդհանուր ժողովը, որոնց քվեարկությամբ պետք է հաստատի Ազգային ժողովը:

Բարձրագույն դատական խորհրդի կարևոր լիազորություններից մեկը առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուներին ցուցակներում ընդգրկելն է: ՄԱԿ-ի 1985 թվականի «Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներ»-ի 13-րդ ենթագլխում սահմանվում է, որ դատավորների առաջխաղացումը, եթե այդպիսին առկա է, պետք է իրականացվի ակնհայտ չափանիշների հիման վրա, ինչպիսիք են՝ մասնագիտական իրազեկումը, բարեխղճությունը, փորձը: Բարձրագույն դատական խորհուրդը կազմում և հաստատում, ինչպես նաև լրացնում և փոփոխում է առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները:

Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակներն են՝

1) վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը՝ քրեական, քաղաքացիական, վարչական մասնագիտացման բաժիններով.

2) վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը[5]:

---

[5] Տե՛ս «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, 123-րդ հոդված, 1-ին մաս:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորություններ և գործունեության կարգը սահմանվում են դատական օրենսգրքով:

Մասնավորապես, «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով են են սահմանվել այն սուբյեկտները, որոնք կարող են խորհրդին առաջարկություններ ներկայացնել կոնկրետ անձին դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու կամ դատավորին մեկ այլ դատարան գործուղելու մասին: Այդ իրավազորությունը կարող է վերապահվել Վճռաբեկ դատարանի նախագահին կամ Բարձրագույն դատական խորհրդի նախագահին կամ ԲԴԽ ցանկացած անդամի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը հաշվարկում է հաջորդ երկու տարվա ընթացքում տվյալ մասնագիտացման վերաքննիչ դատարաններում դատավորների թափուր պաշտոնների համալրման համար անհրաժեշտ դատավորների քանակը: Եթե դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժիններում չի գերազանցում հաջորդ երկու տարում վերաքննիչ դատարանների թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը, ապա Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը հաշվարկված թվով համալրելու անհրաժեշտության մասին[6]:

Հաջորդ լիազորությունը Բարձրագույն դատական խորհրդի հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Ինչ խոսք, կարևոր նշանակություն ունի նաև դատարանների ծախսերի նախահաշիվների սահմանման կարգը: Դատական իշխանության հարաբերական ինքնավար գործառնության համար նախ անհրաժեշտ է ապահովել որոշակի կազմակերպչական, ֆինանսական, նյութատեխնիկական պայմաններ: Սա նշանակում է, որ Խորհուրդը պատասխանատու է դատական

[6] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, 123-րդ հոդված, 1-ին մաս:

համակարգի կազմակերպման համար, ներառյալ՝ աշխատավարձերը, դատարանների շինությունները, ինչպես նաև նյութատեխնիկական հարցերը և այլն: Կարծում ենք, որ այս գործառույթը կգերծանրաբեռնի Խորհրդին, որը չի կարողանա կենտրոնանալ դատավորների առաջխաղացմանն ու կարգապահությանն առնչվող իր հիմնական գործառույթների վրա:

Բարձրագույն դատական խորհրդին դատական իշխանության անկախությունը երաշխավորելու նպատակից բխող լիազորություններից բացի նաև այդ նպատակի հետ ուղղակիորեն չկապված լիազորություններով ավելորդ ծանրաբեռնելը, կարծում ենք, շեղում է խորհրդին իր բուն լիազորությունների կատարումից:

Խորհուրդը, ինչպես նշվեց, մշակում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, վերահսկում է դատարաններիկողմից բյուջետային միջոցների օգտագործումը: Ողջունելի է, որ Խորհուրդը իրավասու է մշակելու դատական համակարգի բյուջեն: Այդուամենայնիվ, դատական համակարգի անկախությունը ամրապնդելու համար ավելի արդյունավետ կլինի, եթե խորհրդին իրավունք տրվի՝ այդ նախահաշիվների նախագիծը ներկայացնելու և պաշտպանելու անմիջապես խորհրդարանում:

Դատական իշխանության անկախության ապահովման համար կարևոր նշանակություն ունի դատավորների պատասխանատվության ոլորտի հարաբերությունների սահմանադրական կարգավորումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվել է, որ. «Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար՝ բացառությամբ, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ»[7]: Բարձրագույն դատական խորհրդի կարևոր լիազորություններից մեկը դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթն է:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը Խորհուրդն իրականացնում է օրենքով սահմանված կարգով: Դատավորի կողմից իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն Բարձրագույն դա-

[7] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., հոդված 164-րդ, 2-րդ կետ //www.arlis.am:

տական խորհուրդը: Դատավորն առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության կարող է ձերբակալվել միայն այն դեպքում, երբ հայտնաբերվել է հանցագործություն կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Սակայն այս դեպքում անհապաղ պետք է տեղյակ պահվի Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ գլխում ամրագրված են դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավակարգավորումները:

Միաժամանակ, նախատեսված է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, լիազոր մարմինը, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող մարմինները չպետք է վերահսկվեն գործադիր իշխանության կողմից: Պետք է բացառել կարգապահական հարցերով կայացվող որոշումների նկատմամբ քաղաքական ազդեցությունը:

Բարձրագույն դատական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, դատավորին և Խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: Բարձրագույն դատական խորհրդի նիստերը հրավիրում է Խորհրդի նախագահը՝ իր նախաձեռնությամբ խորհրդի առնվազն երեք անդամների կամ դատարանի նախագահի պահանջով: Նախաձեռնողի կողմից առաջարկվում է օրակարգում ընդգրկվող հարցը[8]:

Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատա-

[8] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, 90-րդ հոդված:

վորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:

Որպես կանոն՝ դատավորները անձնական պատասխանատվություն չեն կրում իրենց կայացրած որոշումները բեկանվելու կամ փոխվելու համար:

Վենետիկի հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում առանձնակի կարևորում է պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակության հարցը: Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ պետք է սահմանել առավել կոնկրետ հիմքեր կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ ոչ հստակ սահմանումները ուղղակիորեն ազդում են դատավորների անկախության վրա[9]:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին անդրադարձել են նաև Եվրոպայի Դատավորների Խորհրդատվական Խորհուրդը և Եվրոպայի Դատախազների Խորհրդատվական Խորհուրդը (ԵԴԽԽ): Եվրոպայի Դատախազների Խորհրդատվական Խորհուրդը նշում է, որ պետք է առանձնացվի դատավորի պատասխանատվության ենթարկելու երեք հիմնական տեսակ՝ քրեական, քաղաքացիաիրավական և կարգապահական:

Դատավորները քրեական պատասխանատվության ենթակա են այն հանցագործությունների համար, որոնք կապված չեն նրանց մասնագիտական պարտականությունների կատարման հետ: մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում անզգույշ բնույթի խախտումների

[9] Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Նախնական կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ// https://www.venice.coe.int:

համար դատավորները չեն կարող քրեական պատասխանատվության ենթարկվել:

Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- դատական սխալի,
- արդարադատության իրականացման խախտման,
- դատավորի պարտականությունների ոչ պատշաճ կատարման հիմքերի:

Կարգապահական պատասխանատվությունը պետք է կիրառվի հետևյալ սկզբունքի պահպանմամբ՝ յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ կամ հիմնարար կանոնագրքով պետք է հնարավորինս հստակ սահմանվեն այն խախտումները, որոնք կարող են հիմք հանդիսանալ դատավորի կարգապահական պատասխանատվության համար[10]:

Կիևյան հանձնարարականների 25-րդ կետի համաձայն. «Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները պետք է վերաբերեն կոպիտ և աններելի ոչ մասնագիտական վարքագծին, որը վնաս է հասցնում ողջ դատական իշխանության հեղինակությանը: Կարգապահական պատասխանատվությունը չպետք է տարածվի որոշումների բովանդակության վրա, այդ թվում՝ դատարանների միջև իրավական մեկնաբանման տարակարծություններին, ինչպես նաև դատական սխալների դեպքերի կամ դատական համակարգի քննադատության վրա»[11]:

Նշվածից ուղղակիորեն հետևում է, որ դատավորը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության իր կայացրած որոշման բովանդակության, անգամ դատական սխալների համար, քանի որ վերջինս հակասում է դատավորի անկախության սկզբունքին: Դատական ակտերը կարող են վերանայվել ու բեկանվել բացառապես վերադասության կարգով, և ոչ մի այլ մարմին կամ անձ իրավասու չէ գնահատական տալ դատական ակտերին՝ հատկապես այն դեպքում, երբ դրանք օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր են:

---

[10] Տե՛ս Եվրոպայի դատավորների Խորհրդատվական խմբի թիվ 10 եզրակացություն// https://rm.coe.int/magna-carta-in-armenian-/16808e640e:

[11] Տե՛ս Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականներ //https://www.osce.org/files/f/documents/a/4/75436.pdf:

Դատավորի պատասխանատվության ինստիտուտի՝ որպես դատավորի իրավական կարգավիճակի տարրի առանձնացումը պայմանավորված է դատավորի իրավական պաշտպանվածության ապահովման անհրաժեշտությամբ:

Կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրությունը նպաստել է դատական իշխանության անկախության ամրապնդմանը, և համապատասխանում է Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ դատավորին անձեռնմխելիությունից զրկելը պետք է հնարավոր լինի միայն դատական համակարգի մարմինների կողմից[12]:

Դատական համակարգի ղեկավարման և դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառութները պետք է այնպես իրականացվեն, որ վտանգի տակ չդրվի դատավորի բուն անկախությունը, և որ ուշադրության արժանանան միայն օբյեկտիվ և համապատասխան հանգամանքները: Դատավորին կարգապահական պատասխանատվության հիմքերը սահմանվել են Դատական օրենսգրքով: Այսպես՝

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

- արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.
- դատավորի կողմից օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ[13]:

Որպես նյութական և դատավարական նորմերի խախտման ակնհայտ լինելու հիմնավորում՝ նախատեսված է, որ ակնհայտ է համարվում դատավորի կողմից արդարադատության իրականացման ընթացքում նյութական կամ դատավարական նորմի այնպիսի խախտում թույլ տալը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

---

[12] Տե՛ս http://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm, կետ 154:

[13] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, 142-րդ հոդված, 1-ին,2-րդ,3-րդ,4-րդ կետեր:

Հարկ է առանձնահատուկ կերպով ընդգծել, որ խոսքը գնում է նյութական և դատավարական նորմերի մասին, իսկ դրանցից յուրաքանչյուրի բովանդակության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ և մեկնաբանություններ:

«Ակնհայտ» բառը տվյալ պարագայում, մեր կարծիքով, այլ հայեցողության տեղիք տվող հասկացություն է, քանի որ իրավագիտությունում առկա բազմակարծության պայմաններում անհնար է պատկերացնել իրավական նորմի այնպիսի կիրառում, որը հնարավոր չլինի կասկածի տակ դնել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով: Անժխտելի է, որ այն, ինչ ակնհայտ չէ մեկ դատավորի համար, կարող է ակնհայտ լինել մյուսների համար, հատկապես, եթե նրանք համաձայն չեն դատավորի որոշմանը:

«Ակնհայտ» լինելու չափանիշը որևէ հնարավորություն չի տալիս դատավորին՝ կողմնորոշվելու համար, թե ինչպիսին պիտի լինի իր ընտրությունը /որոշումը/, որպեսզի չառաջացնի կարգապահական պատասխանատվություն: Վերոգրյալից հետևում է, որ առաջարկվող սահմանման տառացի մեկնաբանման և կիրառման արդյունքում քննարկվող հիմքը կկրի զուտ հռչակագրային (դեկլարատիվ) բնույթ և չի կարող որևէ դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ խախտումը որպես կարգապահական պատասխանատվության հիմք գնահատելու համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն՝ այն պետք է լինի ակնհայտ և կոպիտ:

Ամփոփելով վերոգրյալը և անդրադառնալով դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերին՝ կարծում ենք, որ այս մեխանիզմը սահմանափակում է դատավորի անկախությունը:

Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ, վճռաբեկ դատարան:

Առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած որոշումները, դատավճիռները կողմը իրավունք ունի սահմանված ժամկետներում բողոքարկել համապատասխան վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի որոշումները կարող են սահմանված կարգով բողոքարկվել վճռաբեկ դատարան, որը կարող է կա՛մ մերժել բերված բողոքը, կա՛մ լրիվ, կա՛մ մասնակիորեն բեկանել և ուղարկել նոր քննության:

Ըստ էության՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանի հիմնական խնդիրներից է առաջին ատյանի օրինական ուժի մեջ չմտած որոշումների վերանայումը վերաքննության և վճռաբեկության կարգով:

Գտնում ենք, որ դատական սխալի համար դատավորը չպետք է ենթարկվի պատասխանատվության, քանի որ առաջին ատյանի դատարանում գործը քննվում է միանձնյա կարգով, Կարծում ենք, որ որոշ դեպքերում չի բացառվում, որ դատարանը կարող է սխալ որոշում կայացնել: Իսկ Վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորների, իսկ վճռաբեկ դատարանում՝է կոլեգիալ կազմով՝ վեց դատավորների կազմով, և այս պարագայում ամեն մի դատավոր ունի իր տեսակետը, և ընդհանուր քննարկման արդյունքում կարող են հանգել մի տեսակետի:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1994 թվականին ընդունված Դատարանների անկախության, արդյունավետության և դերի մասին թիվ R(94) հանձնարարականի 2-րդ կետի d) ենթակետի համաձայն՝ «Որոշման կայացման գործընթացում դատավորները պետք է լինեն անկախ և գործեն առանց որևէ սահմանափակումների, որևէ կողմի կողմից կամ ցանկացած պատճառով ուղղակի կամ անուղղակի կողմնակի ազդեցության, ներգործության, ճնշումների, սպառնալիքների կամ միջամտության: Դատավորները պետք է ունենան անաչառ որոշումներ ընդունելու անսահմանափակ ազատություն՝ ղեկավարվելով իրենց խղճով, փաստերի և իրավունքի գործող նորմերի սեփական մեկնաբանմամբ»[14]:

Կարծում ենք, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները պետք է վերաբերեն կոպիտ և աններելի ոչ մասնագիտական վարքագծին, որը վնաս է հասցնում ողջ դատական իշխանության հեղինակությանը:

Ինչպես վերը նշվեց, կարգապահական պատասխանատվությունը չպետք է տարածվի որոշումների բովանդակության վրա, այդ թվում՝ դատարանների միջև իրավական մեկնաբանման տարակարծություններին, ինչպես նաև դատական սխալների դեպքերի կամ դատական համակարգի քննադատության վրա:

---

[14] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1994 թվականին ընդունված Դատարանների անկախության, արդյունավետության և դերի մասին թիվ R(94) հանձնարարական // https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800cc248:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվել է, որ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան»[15]:

Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Արդարադատությունը Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է միայն դատարանը: Գործող օրենսդրական կարգավորման պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի ներքին անկախության երաշխավորման տեսանկյունից ունենք խնդրահարույց կարգավորումներ. ինչպես նշվեց, Խորհրդին վերապահվել է լայն լիազորություն: Հիմք ընդունելով պատասխանատվության վերաբերյալ ներպետական օրենսդրությունը, և, մասնավորապես, այն դրույթները, համաձայն որոնց՝ Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելիս հանդես է գալիս որպես դատարան:

Հայաստանի Հանրապետությունում արդարադատության իրականացման մենաշնորհը վերապահվել է միայն դատարաններին: Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասը անդամից, որոնցից հինգին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը, դատավորի՝ առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Իսկ մյուս հինգ անդամներին ընտրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրա-

[15] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., հոդված 174-րդ//www.arlis.am:

վաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Թեև ձևական մասն ապահոված է, որ Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս դատարան, բայց որպես դատավոր նրանց կեսը դուրս են դատավոր դառնալու համար օրենքի սահմանած չափանիշներից, այնուամենայնիվ Խորհրդի տասն անդամներից հինգը պրոֆեսիոնալ դատավորներ չեն, ինչը կարող է հանգեցնել սխալ որոշումներ կայացմանը:

Որքանո՞վ է իրավաչափ, որ այդպիսի որոշում կայացնում է դատավորի չափանիշների չհամապատասխանող անձը:

Թեև Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներն ունեն դատավորի կարգավիճակ, դատավորի վարքագծի կանոնները տարածվում են նրանց վրա, բայց դա ինքնին բավարար չէ իրականացնելու այնպիսի գործերի քննություն, որոնցով պետք է որոշեն դատավորի մեղավորության կամ անմեղության հարցը, դատավորի կո սխալ կամ ճիշտ լինելու հարցը, որովհետև այն իր էության մեջ վերապահված է բացառապես դատավորին, դատավորի «սխալ» կամ «ճիշտ» լինելը կարող է ասել միայն դատավորը: Եվ այս մեխանիզմը արդյո՞ք ապահովում է դատական իշխանության անկախությունը: Կարծում ենք, որ ավելի լայն անկախություն կապահովեր նախկին տարբերակը՝ Արդարադատության խորհրդի կողմից դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, քանի որ այդ խորհուրդը կազմված էր 13 անդամից, որոնցից 9-ին ընտրում էր դատավորների ընդհանուր ժողովը, 2-ին՝ Հանրապետության Նախագահը, 2-ին՝ Ազգային ժողովը:

Կարծում ենք, որ Բարձրագույն դատական խորհրդի ձայների հավասարությունը խնդիր է առաջացնում:

Եվ եթե Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան, ապա պետք է վերապահել և սահմանել դատարանին բնորոշ առանձնահատկություններ, օրինակ՝ խորհրդակցական սենյակի առանձնահատկությունը դրանց գաղտնիության ռեժիմը, գաղտնիության խախտման համար պատասխանատվությունը և այլն:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին պատասխանատվության ենթարկելիս դատավորը չի կարող բողոքարկել այդ որոշումը: Օրենսդրությունը պետք է մեղադրվող դատավորին ընձեռի դատավարական երաշխիքներ, ներառյալ՝ պաշտպանության, փաստեր ներկայացնելու իրավունքը և իրավասու դատարանում որոշումը բողոքարկելու իրավունքը: Դատավորների գործերով կարգապահական լսումները պետք է անցկացվեն թափանցիկության պայմաններում: Դրանք պետք է լինեն դռնբաց, բացա-

ռությամբ, երբ մեղադրվող դատավորը միջնորդություն է ներկայացնում լսումը դռնփակ անցկացնելու մասին: Այդ պարագայում միջնորդության հիմնավորված լինելու հարցը որոշում է խորհուրդը: Դատավորի կարգապահության վերաբերյալ որոշումները պետք է պատճառաբանված լինեն: Կարգապահական տույժերի մասին վերջնական որոշումները պետք է հրապարակվեն:

ՀՀ-ում կայանալիք սահմանադրական բարեփոխումների գործընթացում, կարծում ենք, պեք է նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի որոշումները դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկման մասին պետք է բոլոր դեպքերում վիճարկման առարկա դառնան:

Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հետ խորհրդակցության արդյունքում նախապատվությունը տրվել է բացառապես դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկմանը, այն էլ՝ Սահմանադրական դատարանում:

Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության դերակատարությունը բացառիկ է և առանձնահատուկ: Բացառիկությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության այս ճյուղին է վերապահվում իրավասություն՝ գնահատելու օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության սահմանադրականությունն ու օրինականությունը և նրանց պահելու սահմանադրական հավասարակշռության դաշտում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատական իշխանությանն է բացառիկ իրավասություն վերապահված լուծել իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հարցերով առաջացած վեճերը և պաշտոնապես բացահայտել սահմանադրական նորմի իրավական բովանդակությունը' ձևավորելով որոշակի նախադեպային իրավունք: Դատական իշխանությունն է երաշխավորում Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը, որով Սահմանադրության 3-րդ՝ անփոփոխելի հոդվածի ուժով սահմանափակված են իշխանությունները՝ մասնավորապես մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման միջոցով:

Դատական իշխանության ինստիտուտների կազմավորման կարգն ու գործունեության անկախության ապահովման սահմանադրական երաշխիքները կոչված են իշխանության այս թևին հեռու պահելու քաղաքական գոր-

ծընթացներից ու քաղաքական ազդեցություններից, և նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդիր ու գործադիր իշխանությունների համապատասխան ինստիտուտները կազմավորվում են մեկ քաղաքական ուժի կողմից, իշխանությունների զսպման ու հակակշռման հիմնական առաքելությունը գործնականում պետք է իրականացնի դատական իշխանությունը: Վերջինս հնարավոր է դառնում, երբ երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը, և առկա է իրավական ժողովրդավարություն, ինչպես նաև սահմանադրական, քաղաքական ու պառլամենտական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ:

Բոլոր այն դեպքերում, երբ տվյալ նախադրյալները բացակայում են, և իշխանությունների բաժանման համակարգում թերագնահատվում է դատական իշխանության ինքնուրույն պետաիշխանական առաքելությունը, ոչ միայն չի կարող լինել անկախ ու անաչառ արդարադատություն, այլև անխուսափելի են քաղաքական ու վարչական մենիշխանության հաստատումը և իշխանությամբ իրավունքի սահմանափակումը, ինչը, վերջին հաշվով, հանգեցնում է քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման: Նշված ենթատեքստում պետք է դիտարկել ու արժևորել անկախ սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի տեղն ու դերն իշխանությունների բաժանման ու հակակշռման համակարգում:

Սահմանադրությունը տվյալ խնդրին լուծում տվել է թե՝ կառուցակարգային, և թե՝ գործառութային առումով: Նախ, Սահմանադրությամբ նախատեսվել է անկախ պետական մարմնի առկայություն: Այդ առաքելությունն իրականացնելու համար Բարձրագույն դատական խորհուրդն օժտվում է դատարանակազմության, իրավակազմակերպչական, դատական իշխանության համակարգում կադրային քաղաքականության իրականացման, դատավորների գնահատման ու օրենքի առջև հաշվետվողականության երաշխավորման, նրանց արդյունավետ աշխատանքի նախադրյալների ապահովման մի շարք սահմանադրական լիազորություններով, որոնց իրականացումն է համակարգային առումով երաշխիք դառնում դատարանի ու դատավորների անկախության ապահովման համար:

Արդարադատության նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը պահանջում է.

- ունենալ անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական համակարգ,
- ապահովել դատական իշխանության գործառութային, կառուցակար-

գային, նյութական ու սոցիալական անկախությունը

- արդարադատության հիմքում դնել իրավունքի գերակայության երաշխավորումը,
- երաշխավորել սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը,
- հաղթահարել դատարանակազմական լուծումների, դատավարական ընթացակարգերի թերությունները, սուբյեկտիվ հայեցողության շրջանակները, կոռուպցիոն ռիսկերը:

Այս խնդիրների լուծումը պահանջում է համակարգային ու համալիր մոտեցում՝ հիմքում ունենալով միջազգային չափանիշներին համահունչ դատական իշխանության արմատավորման հստակ հայեցակարգ, ինչին ուղղված են Բարձրագույն դատական խորհրդի ջանքերը:

CONSTITUTIONAL AND LEGAL POWERS OF THE SUPREME JUDICIAL COUNCIL IN THE SPHERE OF ENSURING THE INDEPENDENCE OF THE RA JUDICIARY

AMIRYAN ANI
GSU lecturer
e-mail: a.amiryan@gsu.am

The article is devoted to the constitutional and legal powers of the Supreme Judicial Council of the Republic of Armenia as an independent state body in connection with ensuring the independence of the judiciary. Ensuring the independence of the judiciary is one of the most important challenges the Republic of Armenia is facing.

The question of the independence of the judiciary has always been relevant, including various components, in particular, the effective implementation of the functions of self-government bodies within the system, the issues of the appointment of judges and the application of disciplinary liability to them.

The principle of independence of the judiciary in the constitutional systems of modern states is based on the concept of separation of powers. According to this principle, the legislative, executive and judicial powers constitute three separate branches of power, with mechanisms of mutual checks and balances between them. The latter becomes possible when the principle of the rule of law is guaranteed and there is a legal democracy, as well as necessary and sufficient level of constitutional, political and parliamentary culture.

In this context, the article examines the role of the Supreme Judicial Council as an independent constitutional body in the sphere of ensuring the independence of the judiciary, based on the legal regulations of the RA legislation, the Venice Commission, the Bordeaux Declaration.

According to Article 173 of the RA Constitution, the Supreme Judicial Council is an independent state body that guarantees the independence of courts and judges. The independence of the court, in its turn, first of all, depends on the independence of the judge.

The article presents theoretical and practical problems in the field, makes suggestions for the improvement of the relevant legal norms.

Key words: *Constitution, Supreme Judicial Council, court, judge, independence, separation of powers.*

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ПОЛНОМОЧИЯ ВЫСШЕГО СУДЕБНОГО СОВЕТА В СФЕРЕ ОБЕСПЕЧЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ СУДЕБНОЙ ВЛАСТИ РА

АМИРЯН АНИ
Преподаватель ГГУ
электронная почта: a.amiryan@gsu.am

Статья посвящена конституционно-правовым полномочиям Высшего Судебного Совета Республики Армения как независимого государственного органа в связи с обеспечением независимости судебной власти. Обеспечение независимости судебной власти является одним из важнейших вызовов, стоящих перед Республикой Армения.

Вопрос о независимости судебной власти, в частности, проблемы эффективного осуществления функций органов самоуправления внутри этой системы, назначения судей и применения к ним дисциплинарной ответственности, всегда был актуальным. В Конституциях современных государств принцип независимости судебной власти опирается на концепцию разделения властей.

Согласно этому принципу, законодательная, исполнительная и судебная власти составляют три отдельные ветви власти, между которыми действуют механизмы взаимных сдержек и противовесов. Последнее становится возможным, когда гарантирован принцип верховенства права и существует правовая

демократия, а также необходимый и достаточный уровень конституционной, политической и парламентской культуры.

В статье в указанном контексте рассматривается роль Высшего судебного совета как независимого конституционного органа в сфере обеспечения независимости судебной власти, принимая за основу правовое регулирование законодательства РА, Венецианской комиссии, Декларации Бордо.

Согласно статье 173 Конституции РА, Высший Судебный Совет является независимым государственным органом, гарантирующим независимость судов и судей. А независимость суда, в первую очередь, обусловлена независимостью судьи.

В статье представлены теоретические и практические проблемы по сфере, делаются предложения по совершенствованию правовых норм.

Ключевые слова: *Конституция, Высший Судебный Совет, суд, судья, независимость, разделение властей.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 20.08.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.: